

## «Հերացի» ավագ դպրոցում 12 դասարան կահավորվել է ճապոնիայի կառավարության աջակցությամբ



12:58, 15 Մարտ, 2018

ԵՐԵՎԱՆ, 14 ՄԱՐՏԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի «Հերացի» ավագ դպրոցի 25 դասարանից 12-ն ամբողջությամբ վերազինվել, կահավորվել է ճապոնիայի կառավարության աջակցությամբ:

**«Արմենպրես»**-ի հաղորդմամբ՝ այս մասին լրագրողների հետ զրույցում ասաց Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի «Հերացի» ավագ դպրոցի տնօրեն, «Ապագան քոնն է» կազմակերպության նախագահ Նարինե Սարգսյանը:

դահլիճը:



«2017 թվականին «Հերացի» ավագ դպրոցում կահավորում և սարքավորումների համալրում է եղել: Պետությունը որոշ չափով աջակցեց՝ գույք տրամադրեց, սակայն աշակերտների թվաքանակը շատ էր աճել՝ 80-ից հասնելով 630-ի: Այդ պարագայում գույքի կարիքն ավելի շատ էր զգացվում և ծրագրի շրջանակում 25 դասարանից 12-ը վերազինվեց ճապոնացիների շնորհիվ: Կենսաբանության, ֆիզիկայի, քիմիայի դասարանների համար սարքավորումներ, գույք և այլ պարագաներ են գնվել: Դրամաշնորհի միջոցով նորոգվեցին նաև գրադարանը, դահլիճը», - նշեց Նարինե Սարգսյանը:





Նրա խոսքով՝ դրամաշնորհի միջոցով ձեռք բերված մանրադիտակների միջոցով դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Շուշաննա Աթաջանյանն իրականացրել է հետազոտական աշխատանք խմորասնկերի վերաբերյալ և մրցույթում հաղթել: Նա կմեկնի Կալիֆորնիա և կմասնակցի միջազգային մրցույթին:

### Կարծիքներ



10:05, 22.03.2018

Շնորհավորելով Պուտինին՝ Թրամփը ցույց տվեց, որ ընդունում է Ղրիմում նրա լեգիտիմ նախագահ լինելը. Ալեն Ղետնդյան



15:08, 17.03.2018

Ադրբեջանի քայլերը նախընտրական շրուններ են. Թեան Պողոսյան

Բաժնի բոլոր նյութերը

### Հարցազրույցներ



10:25, 15.03.2018

Վերականգնվող էներգետիկան արտադրության մեջ հնարավոր է հասցնել 60 տոկոսի. Հայաստանը բռնել է ինքնաբավության ուղին



10:09, 14.03.2018

Արմավիրի դատախազության առաջնային խնդիրներից է լինելու կոռուպցիայի դեմ պայքարը. Վահե Հովհաննիսյանի հարցազրույցը

Բաժնի բոլոր նյութերը

### Փաստ մեկնաբանությամբ



14:03, 12.02.2018